

**ՊԱՏԱՌԻԿՆԵՐ
«ՀԱԿՈՐ ՄԵՂԱՊԱՐՏ» ՄԵԴԱԼԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի պետական գրադարանի հուշամեդալիոնը թողարկվել է 1989 թ. Լենինգրադի դրամահատարանում 1000 օրինակով տոմսակ մետաղից: Մինչև 90-97 % պղինձ և 3-7 % ցինկ պարունակող արույրները կոչվում են տոմսակ, մակնիշվում են՝ Պ96, Պ90 ունեն բարձր պլաստիկություն: Դեֆորմացված արույրները կիրառում են խողովակներ արտադրելու, տարբեր պրոֆիլներ (ժապավեններ, թիթեղներ, ձողիկներ, լարեր), կովածքներ, ինչպես նաև ճնշման տակ աշխատող պատասխանատու դետալներ պատրաստելու համար:

Հուշամեդալը կյանքի է կոչվել Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Հենրիկ Լիլոյանի ջանքերի և իմ ստեղծագործ մտքի արդյունքում:

Դիմերեսին (ավերս) հայ առաջին տպագրիչ, հայկական տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտի կերպարն է: Մեդալիոնի կոմպոզիցիոն պատկերում գետեղված քառակուսին տպագրիչին պատկանող տպարանանիշն է: Մեդալի դարձերեսին պատկերված է Հայաստանի ազգային գրադարանի կենտրոնական մասնաշենքը՝ իր ուրույն գեղարվեստական տեսքով: Շենքի մի կողմից վեր է խոյանում կենաց ծառի ճյուղը՝ կյանքի շարունակական հարատևման խորհրդանիշը, մյուս կողմից՝ նռան ծառի ճյուղը՝ պտղաբերության խորհրդանիշը: Երկու ճյուղերը ժապավենով միահյուսված են՝ համահունչ գրկախառնվելով գրադարանի շենքի պատկերին:

Հուշամեդալիոնը կրում է եռալեզու արձանագրություն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն տեքստերով, որը հարստացնում է ոչ միայն մեդալիոնի գեղարվեստական պատկերը, այլև տեղեկացնում է 16-րդ դարասկզբին Վենետիկում հայ գրքի տպագրության մտքի թռիչքին: